**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-10/11-1**

ք. Երևան «08» «09» 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԻՆՏԵՐՔԼԻՆ», ի դեմս տնօրեն Հ. Վիրաբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված

վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 37,238,800 (երեսունյոթ միլիոն երկու հարյուր երեսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[1] Քանի որ Պայմանագիրը կնքված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են: Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **8** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԻՆՏԵՐՔԼԻՆ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Կոմիտասի պող. 1/52 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011117034 | Հ/Հ 220493332187000 |
| ՀՎՀՀ 02703824 | ՀՎՀՀ 01249441 |
| ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | տնօրեն |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Հ. ՎԻՐԱԲՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-10/11-1 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**ՀՀ ՊՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի և հարակից տարածքի սանիտարական մաքրման ծառայությունների տեխնիկական տվյալները**

Մաքրման ենթակա են ՀՀ ՊՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի տարածքը (այդ թվում՝ հարակից) և առկա շենք-շինությունները: Մաքրման ծառայություններն իրականացվում են տարբեր հերթափոխերով, ընդ որում՝ 1-ին հերթափոխը ժամը 06:30-ից մինչև 08:45-ը մաքրում են հասարակական, վարչական (այդ թվում՝ բուժկետ) նշանակության և ընդհանուր օգտագործման տարածքները (այդ թվում՝ հարթակներ, հավաքակայան, շարահրապարակ, ճանապարհներ, մայթեր, արահետներ, կանաչապատ տարածքներ, ցանկապատին հարակից տարածքներ), 2-րդ հերթափոխը ժամը 09:00-ից մինչև 13:00-ն մաքրում են բնակելի (ննջարաններ) և մարզական նշանակության տարածքները, 1-ին և 2-րդ հերթափոխների թվակազմը՝ ոչ պակաս 88 հոգուց: 3-րդ հերթափոխը (12 հոգի), ժամը 10:00-ից մինչև ժամը 22:00-ն իրականացնում են հերթապահություն՝ մաքրելով ընդհանուր օգտագործման տարածքները, իսկ անհրաժեշտության և առաջին իսկ պահանջի դեպքում՝ նաև 1-ին և 2-րդ հերթափոխների համար նախատեսված տարածքների համապատասխան մակերեսներ: Պայմանագրի գործողության ողջ ընթացքում զուգարանի թղթի, թղթյա սրբիչների, հեղուկ օճառի, ավտոմատ հոտազերծիչների դիսպենսերները կատարողի կողմից տեղադրվում և անհրաժեշտության դեպքում փոխարինվում են նորերով անվճար:

| Հ/հ | Սանմաքրության մեջ ներառված առանձին ծառայությունների անվանումը | | Չափի միավորը | Մակերեսը (ծավալը, քանակը) | Օգտագործվող նյութեր | Օգտագործվող պարագաներ և սարքավորումներ | Ծառայության մատուցման հաճախությունը 1 ամսվա կտրվածքով |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Սանհանգույցների մաքրում և ախտահանում | | հատ | 156 | «Դայվերսի» արտադրության R1 կամ դրան համարժեք խտանյութ: 1 քմ մակերեսի համար օգտագործել սահմանված նորմերով պահանջվող նյութի քանակ: | Ձեռնոց, խոզանակ, սպունգ և միկրոֆիբրե լաթ | Ամենօրյա |
| 2. | Գրասենյակային կահույքի, կահույքապատ դռների և կահույքով երեսպատված մակերեսների մաքրում և փոշեհանում | | քմ | 950+792+ 1550=3292 | «Դայվերսի» արտադրության R2 կամ դրան համարժեք խտանյութ: 1 քմ մակերեսի համար օգտագործել սահմանված նորմերով պահանջվող նյութի քանակ: | Ձեռնոց և միկրոֆիբրե լաթեր | 10 անգամ |
| 3. | Ապակե միջնապատերի, վիտրաժների և ապակեպատ դռների մաքրում | | քմ | 6573 | «Դայվերսի» արտադրության R3 կամ դրան համարժեք խտանյութ: 1 քմ մակերեսի համար օգտագործել սահմանված նորմերով պահանջվող նյութի քանակ: | Ձեռնոց և միկրոֆիբրե լաթեր | 2 անգամ |
| 4. | Պատուհանների ապակիների մաքրում | ներքին | քմ | 2200 | | | Ամենօրյա |
| | | արտաքին | քմ | 2200 | | | 4 անգամ |
| 5. | Ճակատային ապակեպատ մակերեսների մաքրում | | քմ | 500 | «Դայվերսի» արտադրության R3 կամ դրան համարժեք խտանյութ: 1 քմ մակերեսի համար օգտագործել սահմանված նորմերով պահանջվող նյութի քանակ: | Ձեռնոց և միկրոֆիբրե լաթեր | 4 ամիսը 1 անգամ |
| 6. | Փայտե, լամինատե և վինիլային հատակների փոշեհանում և մաքրում | | քմ | 5169 | «Դայվերսի» արտադրության Taski Sprint 200 և Jontes Tensol կամ դրանց համարժեք խտանյութեր: 1 քմ մակերեսի համար օգտագործել սահմանված նորմերով պահանջվող նյութի քանակ: | Ձեռնոց, ավել-բահիկ, դույլ, թաց և չոր մոփեր Փոշեկուլ «Զելմեր» կամ համարժեք | Ամենօրյա՝ բացառությամբ ոչ աշխատանքային օրերի |
| 7. | Կոշտ մակերևույթով (բազալտե, գրանիտե, մարմարե, պրեսկերամոգրանիտից, տրավերտինից, խճային) հատակների փոշեհանում և մաքրում, փայլեցում | | քմ | 18482 | «Դայվերսի» արտադրության Jontec Tensol կամ դրան համարժեք խտանյութ: 1 քմ մակերեսի համար օգտագործել սահմանված նորմերով պահանջվող նյութի քանակ | Ձեռնոց, ավել-բահիկ, դույլ, թաց և չոր մոփեր | Ամենօրյա՝ բացառությամբ ոչ աշխատանքային օրերի |
| | | | | | Համապատասխան նյութեր | Հատակ լվացող սարք «Կերխեր» կամ համարժեք | 1 անգամ |
| 8. | Գորգապատ մակերեսների փոշեհանում | | քմ | 674 | | Փոշեկուլ «Զելմեր» կամ համարժեք | Ամենօրյա՝ բացառությամբ ոչ աշխատանքային օրերի |
| 9. | Գորգապատ մակերեսների մաքրում (լվացում) | | քմ | 674 | «Դայվերսի» արտադրության Taski Tapi Shampoo կամ դրան համարժեք խտանյութ: 1 քմ մակերեսի համար օգտագործել սահմանված նորմերով պահանջվող նյութի քանակ: | Գորգ լվացող սարք (չոր փրփուր արտադրող) | 2 ամիսը 1 անգամ |
| 10. | Ներտարածքային ճանապարհ-ների, մայթերի, արահետների, շարահրապարակի և սպորտ հրապարակների մաքրում | | քմ | 20510 | | Ձեռնոց, ավել-բահիկ, դույլ | Ամենօրյա |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11. | Սելեվատարի մաքրում | գմ | 453 | | Ձեռնոց, ավել-բահիկ, դույլ | 1 անգամ |
| 12. | Բոլոր շենք-շինությունների մուտքերի, աստիճանների, մայթերի, արահետների, ճանապարհների, շարահրապարակի և սպորտհրապարակի մաքրում ձյունից և սառցաշերտերից | քմ | 20510 | | Բահ, ձյունմաքրող տեխնիկական միջոցներ | Ըստ անհրաժեշտության |
| 13. | Սանհանգույցների հոտազերծում | հատ | 156 | Քարթրիջի լիցքավորումը՝ պարունակությունը վերջանալուց անմիջապես հետո: | Հոտազերծիչ «Աէռվիկ» կամ համարժեք | Ավտոմատ |
| 14. | Աղբամանների մաքրում | հատ | 230 | 8 լ. Տարողության պոլիէթիլենային տոպրակներ | | Մաքրումը՝ ամենօրյա՝ բացառությամբ ոչ աշխատանքային օրերի, փոխարինումը՝ ամսական 10 անգամ |
| 15. | Աղբի տեղափոխումը աղբանոց | հատ | 20 | 60 լ տարողության պոլիէթիլենային տոպրակներ | | Ամենօրյա՝ բացառությամբ ոչ աշխատանքային օրերի |
| 16. | Սանհանգույցներում անհրաժեշտ պարագաների ապահովում | | | Լիցքավորվում են ըստ նախատեսված քանակի | Համապատասխան դիսպենսերներ | Ամենօրյա |
| | -հեղուկ օճառ | հատ | 156 | 1գ/սմ3 խտությունից ոչ պակաս հեղուկ օճառ | | |
| | -թղթյա սրբիչ | հատ | 156 | Երկշերտ, խոնավ ձեռքին չկպչող թղթյա սրբիչ «Սկաուեստ» կամ համարժեք | | |
| | -զուգարանի թուղթ | հատ | 156 | 180 մ երկարությամբ զուգարանի թուղթ «Սկաուեստ» կամ համարժեք | | |

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ծառայության անվանումը | Օրեկան մաքրման ենթակա տարածք, քմ | Պլանավորված գինը՝ չորս ամսվա համար (դրամ) | Ընդհանուր գումար/դրամ / |
|---|---|---|---|---|
| 1. | Սանիտարական մաքրման (շենքերի մաքրման) ծառայություններ | 42415 | 37,238,800 | 37,238,800 |

***Գնման ժամանակացույց***՝ *Ծառայությունների մատուցումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԻՆՏԵՐՔԼԻՆ» ՍՊԸ
տնօրեն

Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-10/11-1 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ծառայության անվանումը | CPV կոդ | Ընդհանուր գումար/դրամ | Վճարումը՝ |
|---|---|---|---|---|
| 1. | Սանիտարական մաքրման (շենքերի մաքրման) ծառայություններ | 90911110/3 | 37,238,800 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԻՆՏԵՐՔԼԻՆ» ՍՊԸ
տնօրեն

Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

**Հավելված N 3**
**N ԳՀԾՁԲ-10/11-1 պայմանագրի**

Պայմանագրի կողմ

______________________________
______________________________
գտնվելու վայրը ________________
հh ___________________________
______________________________
հվhh _________________________

Պատվիրատու

______________________________
______________________________
գտնվելու վայրը ________________
հh ___________________________
______________________________
հվhh _________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «            » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

**Հավելված N 3.1**
**N ԳՀԾՁԲ-10/11-1 պայմանագրի**

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N __________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԾՁԲ-10/11-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **28 -ը սեպտեմբերի 2017թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «ԻՆՏԵՐՔԼԻՆ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Վիրաբյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ (այսուհետ՝ Կատարող), երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 08.09.2017թ. կնքված № ԳՀԾՁԲ-10/11-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը և այն փաստը, որ «ԻՆՏԵՐՔԼԻՆ» ՍՊԸ-ն համաձայնվել է գնման ժամանակացույցում ներառված /Սանիտարական մաքրման (շենքերի մաքրման) ծառայությունների գինը նվազեցնել 34,000,000 ՀՀ դրամի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Կատարողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Կատարողը պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 34,000,000 (երեսունչորս միլիոն) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Ծառայության դիմաց դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում, Համաձայնագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում, բայց ոչ ուշ, քան 20.12.2017թ.:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲ վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԻՆՏԵՐՔԼԻՆ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Կոմիտասի պող. 51/52 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011117034 | Հ/Հ 220493332187000 |
| ՀՎՀՀ 02703824 | ՀՎՀՀ 01249441 |
| ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | տնօրեն |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Հ. ՎԻՐԱԲՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-10/11-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ծառայության անվանումը | Օրեկան մաքրման ենթակա տարածք, քմ | Ընդհանուր գինը՝ չորս ամսվա համար (ՀՀ դրամ) | Ծառայության մատուցման | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Սկիզբ՝ | Ավարտ՝ |
| 1 | Սանիտարական մաքրման (շենքերի մաքրման) ծառայություններ | 42415 | 34,000,000 | 2017թ. սեպտեմբեր | 2017թ. դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 20.12.2017թ. |

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-10/11-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ծառայության անվանումը | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2017թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 20.12.2017թ. |
| 1. | Սանիտարական մաքրման (շենքերի մաքրման) ծառայություններ | 90911110/3/10/1 | 34,000,000 | 8,500,000 | 17,000,000 | 34,000,000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

**Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԻՆՏԵՐՔԼԻՆ» ՍՊԸ
տնօրեն

**Հ. ՎԻՐԱԲՅԱՆ**